Հավելված N 4
ՀՀ փոխվարչապետի
N 516-Լ որոշման

«ԷԿՈՊԱՐԵԿ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ», «ԷԿՈՊԱՐԵԿ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ» ԵՎ «ԷԿՈՊԱՐԵԿ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ» ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Էկոպարեկ առաջին կարգի», «Էկոպարեկ երկրորդ կարգի» և «Էկոպարեկ երրորդ կարգի» կրծքանշաններով (ձևերը կցվում են) պարգևատրվում են այն ծառայողները, ովքեր լուծել են ծառայության առջև դրված խնդիրներ, դրսևորել բարձր մասնագիտական կարողություններ:

2. «Էկոպարեկ առաջին կարգի» կրծքանշանը ոսկեգույն է, որի երկարությունը 50 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 42 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Կրծքանշանի կենտրոնում կանաչ ֆոնի վրա պատկերված է էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ ծառայություն) խորհրդանշանը: Խորհրդանշանի վերևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված են «ԷՊԾ ՀԱՅԱՍՏԱՆ» բառերը: Կրծքանշանի ներքևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված է «ԷԿՈՊԱՐԵԿ» բառը: Ծառայության խորհրդանշանի և «ԷԿՈՊԱՐԵԿ» բառի միջնամասում նշված է հռոմեական «I» թիվը:

3. «Էկոպարեկ երկրորդ կարգի» կրծքանշանը ոսկեգույն է, որի երկարությունը 50 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 42 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Կրծքանշանի կենտրոնում կանաչ ֆոնի վրա պատկերված է ծառայության խորհրդանշանը: Խորհրդանշանի վերևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված են «ԷՊԾ ՀԱՅԱՍՏԱՆ» բառերը: Կրծքանշանի ներքևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված է

«ԷԿՈՊԱՐԵԿ» բառը: Ծառայության խորհրդանշանի և «ԷԿՈՊԱՐԵԿ» բառի միջնամասում նշված է հռոմեական «II» թիվը:

4. «Էկոպարեկ երրորդ կարգի» կրծքանշանը ոսկեգույն է, որի երկարությունը 50 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 42 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Կրծքանշանի կենտրոնում կանաչ ֆոնի վրա պատկերված է ծառայության խորհրդանշանը: Խորհրդանշանի վերևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված են «ԷՊԾ ՀԱՅԱՍՏԱՆ» բառերը: Կրծքանշանի ներքևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված է «ԷԿՈՊԱՐԵԿ» բառը: Ծառայության խորհրդանշանի և «ԷԿՈՊԱՐԵԿ» բառի միջնամասում նշված է հռոմեական «III» թիվը:

5. «Էկոպարեկ առաջին կարգի», «Էկոպարեկ երկրորդ կարգի» և «Էկոպարեկ երրորդ կարգի» կրծքանշանների դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված են «ԷՊԾ» և «EPS» բառերը:

6. «Էկոպարեկ առաջին կարգի», «Էկոպարեկ երկրորդ կարգի» և «Էկոպարեկ երրորդ կարգի» կրծքանշանները դարձերեսից համարակալված են և ունեն պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար:

7. Կրծքանշանները շնորհում է ծառայության պետը: Կրծքանշանների հետ տրվում են վկայականներ:

Ձև

«Էկոպարեկ առաջին կարգի», «Էկոպարեկ երկրորդ կարգի»
և «Էկոպարեկ երրորդ կարգի» կրծքանշանների

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ